

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-503-06.03.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է
օրենքով սահմանել պահանջ, ըստ որի՝

1. Փաստացի տոկոսադրույքի մասին նշումն առնվազն պետք է ներառված լինի նաև
հաճախորդի ստորագրության համար նախատեսված հատվածից անմիջապես հետո՝ նույն
էջում (գործող կարգավորումներով նախատեսվում է տարեկան փաստացի տոկոսադրույքի
չափի վերաբերյալ նշում առանց մասնավորեցնելու դրա տեղադրման վայրը): Նախագծի
հիմնավորմամբ նշված լրացումը կնպաստի անձանց կողմից տոկոսադրույքի մասին հստակ
պատկերացում կազմելուն, քանի որ հաճախ վերջիններս առանց կարդալու կամ առանց ճիշտ
հասկանալու տոկոսադրույքի չափը ստորագրում են պայմանագիրը:

2. Արգելվում է կրեդիտավորման պայմանագրերի կնքումը (այդ թվում՝ առցանց
եղանակով վարկերի հաստատումը) ժամը 22:00-ից 07:00-ն ընկած ժամանակահատվածում այն
հիմնավորմամբ, որ գիշերային ժամերին սպառողական վարկերով տրամադրված գումարների
օգտագործումը, որպես կանոն, չի կարող լինել հիմնավորված և առաջացնում է հավելյալ
սոցիալական ռիսկեր: Նախագիծն կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է նաև, որ
քաղաքացիները գիշերային ժամերին դիմում են վարկ ստանալու համար՝ լինելով ոչ սթափ
վիճակում, հաճախ տարված նաև խաղաղրույքներ կատարելու ու մոլեխաղերի մոլուցքով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված առաջարկություն-
ների վերաբերյալ հայտնում է՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արտակ
Մանուկյանի և Վարազդատ Կարապետյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով

ներկայացված «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-491-27.02.2020-ՖՎ-011/0) լրամշակված տարբերակում արդեն իսկ նախատեսվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3.1-ին մասով, ըստ որի՝ «Կրեդիտավորման պայմանագրում սպառողը ձեռագրով, իսկ էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու դեպքում՝ էլեկտրոնային եղանակով տպագրելու միջոցով գրում է, որ գիտակցում է տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը՝ նշելով այդ տոկոսադրույքը»։ Կարծում ենք, որ նշված նախագծով առաջարկվող լուծումն ապահովում է ներկայացված նախագծով հետապնդվող՝ վարկերի փաստացի տոկոսադրույքների մասին վարկառուների հստակ տեղեկացվածությունը։

2. կրեդիտավորման պայմանագրերի կնքման ժամային սահմանափակումը հարկ է քննարկել նախագծի հիմնավորմամբ վկայակոչված խնդիրների և նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքի համատեքստում։

Ընդհանուր առմամբ համաձայնելով այն մտահոգությանը, որ գիշերային ժամերին կանխիկ ֆինանսական միջոցների կարիք ունենալու դեպքում վարկ ստանալու շուրջօրյա հասանելիությունը կարող է ռիսկեր առաջացնել՝ գտնում ենք, որ կրեդիտավորման պայմանագրերի կնքման առաջարկվող սահմանափակումը նշված խնդրի հիմնավորված միակ լուծումը չի կարող լինել։

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով։ Նրա նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն։ Այս հանգամանքը հաշվի առնելով, խնդրի

կարգավորումը նպատակահարմար է քննարկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը սահմանված քաղաքացու գործունակությունը սահմանափակելու իրավակարգավորման լույսի ներքո:

Հարկ է նկատել նաև, որ առաջարկվող սահմանափակումը կվերաբերվի ոչ միայն ոչ սթափ կամ մոլեխաղերի համար վարկավորման դիմած անձանց, այլև հրատապ խնդիրների լուծման համար վարկեր ստացող անձանց, ինչն արդարացված չի կարող լինել: Ուսումնասիրված երկրներում նման պրոդուկտներն արգելված չեն, սակայն, օրինակ Մեծ Բրիտանիայում գիշերային վարկավորման տոկոսադրույքն ավելի բարձր է, ինչն անուղղակիորեն ստիպում է անձանց չդիմով գիշերային վարկավորման:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ անկանխիկ դրամաշրջանառության և առցանց բանկային ծառայությունների խթանման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականության համատեքստում դրամաշրջանառության և գործարքների ավանդական տեսակներին հարմարեցված հատվածական օրենսդրական կարգավորումները, ըստ էության, արդիական չեն, իսկ նախագծի հիմնավորմամբ քննարկվող ռիսկերը հնարավոր է գսպել թե արդեն իսկ գործող կարգավորումների շրջանակում, թե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նախաձեռնված պատասխանատու վարկավորման գործիքների ներդրման արդյունքում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արդեն իսկ քայլեր են նախաձեռնվել պատասխանատու վարկավորման մշակույթի ամրապնդման ուղղությամբ: Մասնավորապես, ներկայումս աշխատանքներ են իրականացվում պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության և հաճախորդի պարտավորության ու եկամտի սահմանային հարաբերակցության ներդրման ուղղությամբ, որոնք նպատակ ունեն խրախուսելու պատասխանատու վարկավորումը: Վերջինս ուղղված է վարկառուների պաշտպանությանը պարտքի գերկուտակումներից և ենթադրում է, որ վարկավորման գործընթացում բանկերը

պետք է գնահատեն հաճախորդների եկամուտների մակարդակը, որպեսզի նրանք ի սկզբանե ստանան այնքան վարկ, որքան կկարողանան սպասարկել:

Անփոփելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի արդյունքում ֆինանսական կազմակերպությունների առջև ծառացած հրատապ լուծումներ պահանջող խնդիրները, ինչպես նաև արդեն իսկ ձեռնարկված քայլերը, առաջարկում է ձեռնպահ մնալ նախագծի ընդունումից: